

ձել Հազարները, Գրողը տանի զամէնցն ալ:  
Ենթալրէ որ նոյն իսկ Խմբիննեցքի Վրայ  
վստահ էնին, մանաւանդ զիւանապետը անոր  
հետ շմբ գիտեր ինչպիսի բանակցութիւն մը  
սկսե էր:

Արշակուցքի հառաջեց միայն Պարապաշ,  
միշտ աւելի ուժով խորդալով, բնոյ մէջ կը  
մրմրար.

— Տէր, Տէր, զուն ազատէ զմեզ:  
— Ե՞րբ մտավիր ես մեկնելու, - հար-  
ցուզ դրօյշակակիրը Այցելուցցին:

— Տարակոյս չկայ որ Զափլինսքիին պէտք  
եմ սպասել, անշուշտ մենամարտիլ պիտի  
ուզէ:

— Է՛հ, թող. զինքը չես ճանշնար: Եթէ չզիանար ո՞ր վխանիովիթցըիի դրօշին ասակ կը զինուորիս, իրեն տեղը մանաւանդ իրեն-ներէն մէկը կը զրկէր ....: Սակայն իշխա-նին հետ իշաղու շրջար:

— Անոր լուր կ'ուղարկեմ թէ պատրաստ  
եմ երբ կ'ուզէ, և երկու կամ երեք օրէն կը  
մեկնիմ: Անոր դարձնաներէն ալ վախ չունիմ:

**Առ բաելով Աքշեպուցքի բարեւեց և զուրս  
երաւ:**

Հքասարակին վրայ վասուող բացերը կարմիր լոյս մը տարածեր էին քաղաքին վրայ. կարծես ամբողջ Զիկրին հրազդի մը ճարակ եղած էր : Խանոնաձայն աղմանկը երթալով կը բարձրանար. մէկ կոպէ՛ Հովիմները աշխապատ գաշտին տիսուր երգերը կ'երգէին. աւելի անդին՝ վայրենի Զարորոժէիներու խումբ մը կրակին չորս կողմէ կը պարէր, զիմարիները օդին մէջ նեսելով, հրացաններ պարապելով և օդի խմելով. Մշերթ ընա մերթ վէճ մը, կուի մը կը փրմէր, զոր ծերագոյնց կը խաղաղցնէին : Արշենուցը ի բոնագատուեցաւ հրաժակելով իրեն ճամբայ բանաւը, աղմուկը և աղաղակները լսելով՝ վայրկեան մը հաւարեցաւ թէ արդէն սկսեր է յեղափոխութիւնը, կարծեց թէ սպառանլից ակնարկներու և նախատանաց նշաւակ եղեր է : Աւանջին մէջ կը հնալին միշտ Պարապաշի խօսքերը. « Տէր, Տէր, զուն ազատէ զմեզ » :

Եւ հովիսները աւելի բարձր կ'իրպէին, և  
Զարուրոժիները հրացանի հարուածներ կը  
պարպէին, և օդին գետի պէս կը վազէր:

Օքշեպուցիքի քնանալու գնաց. հեռուէն կը հասնէին ականջին հրացանի ձայները և ամբոխին աղաղակները:

ԹՐԱԴ. Հ. Ա. ԳՈՆՏԱՔՅԱՆ

## ԲՆՏԱՆԵԿԱՆ ՅԱՐԿԸ

### (ՏԱՐԾ ՏԱՐԾՈՒՅՆ ԴԵՊՔ ՄԸ)

1896-1901

II. n. V. 9.

Կեսորուան ամենէն հրատապ ժամի էր, առ  
բեւը սակայն քօղարկուած՝ այնպիսի նուազ-  
կոտ գոյն մը առած, որ կարծես խաղաղ  
լուուրնկայ մը կը շողէր՝ դալարաւէտ բար-  
ձրութեանց վրայ, որոց անկիւններէն կը  
յայտնուէր իզմիտի ծոցը, ծիծաղկոս և մո-  
գական, ինչպէս պատմութեան երջանիկ էջ  
մր:

Այս պահուն էր, երբ գիւղացի մը, յիս-  
նամեայ, բայց ծերունիի վսեմ երեւոյթով  
և աղեծածն մօրոքով, մազոս կործքը բաց  
և աշերը կապոյա՛ կարծես իր երկնքէն գող-  
ցած, կողով մը կանակին վրայ՝ կ'անցնէր  
լեռնային անձուկ ճանապարհէ մը՝ արեւե-  
լեան երգ մը մըմնջերալ:

Զախ թեսեին վրայ բազմած էր նկարչական ցնցոտիքի մը մէջ եռամեայ տղայ մը՝ որ լաւագսն զգեստի մը մէջ հրեշտակ մը պիտի թուէր, Ծերաւնին՝ փոքրիկի բժշկի ցուցնելու կը առանէր. վասն զի իր Մ..... զիւղին մէջ միշտ բացակայ եղած էին երկու աւենակարենոր մարդիկը. բժիշկը և փարթապետը, Նա երգելով զիցացանի մը քաջութիւնը կը ներսողէր, և արձապանզը, որ կ'ընկերէր իրեն՝ ներպաշնակութիւն մը կու ասար: Երբեմն կը լուէր, և որդույն գանձայով, — իրրեւ թէ բան մը հասկնար ան —, խանդավառութեամբ մը կ'ըսէր. «Խաչինկ», բու պապի է

Քաջ Աւագը՝ որուն դիսցազնութիւնները կը պատմեմ» : Յեսայ, նորէն կը սկսէր լեռներաւն պատմել Աւագին գործերու :

Այդ մարդը թորոս՝ բնութեան կոյս որպին էր, լեռներու խոռոշներուն մէջ ծնած և զազաններու հետ ապրած։ Նա զաժան աշխատանքով մը իր ընտանիքը կ'ապրեցնէր. բայց երջանիկ կը զգար ինքզինքը. որովհետեւ լինացին մը համար աշխատանքը մեծագոյն վայելքն է, մանաւանդ երբ զուարթ եղանակ մը կ'ընկերէ անոր։ Սակայն այդ երգը այս անգամ իրեն գարան մը պիտի լարեր . . .

Եթր թորոս խիտ կանաչներով ծածկուած ապրիւրի մը քուլէն կ'անցնէր՝ երեց կիրածիներ ուշադրութեամբ մտիկ ըրին անոր երգին. և երբ բան մը շհասկցան՝

— Ահմէս, ըսաւ մին, լազ մը պիտի ըլլայ. մեզի ալ քիչ մը ստակ կը պակսէր. հրացանս ուղեցնմ։

— Զէ, խճնիթ ես. չես տեսներ հաւեկիթի կողավը կանակին վրայ. գործերնին ինչ է. հսու սպասնեց, մինչեւ որ Պ... գիւղէն զառնայ. հաւեկիթներուն ստակն ալ զրբապաննս կը մտն. Եթեայ, եթէ ոչ մարդուն գոնէ հաւեկիթներուն ինայենք։

— Իրաւունց ունի Հիւսէյնը, մրմուց երրորդը. լաւ է որ հսու սպասնեց և զարձին սպասնենց զինքը։

Դեռ կը շարունակէր թորոս իր նսյն երգը՝ զոր կրինել չէր ձանձրանար. Մինչեւ որ Պ... գիւղը շհասաւ՝ նա ձայնը շկարեց. և յետոյ Պ... գիւղին մէջ փոխանակ Աւազին՝ սկսաւ իր հաւեկիթները երգել՝ աժան զնով։

Գիւղի շուկային մէջ, ուր հայ գիւղացիները կէս հայերէնսով մը զաշախն պատուղները և իսկմատի ծոցին ձիները կը թուարէէին՝ թորոսն ալ իր հաւեկիթները կը գովասանէր լեռնական ձայնով ու շեշտով։

Կողովը զատարկելին վերջ բժիշկին զնաց, անկից քանի մը սովորական պատուկներ առնելու համար. յետոյ կնոջը և որդիիներուն ինդրած իրենքները և ուտելիքները առնելով՝ հաց ու ձիթապտուզ զնեց և ուտելով ճամբարյնկա, արեւուարձն հետ առն հասնելու համար. թաւական հեռացած էր, հեւհեալով, զանդաղ քայլափոխելով՝ նա կարեց վերելը օձապտոյս ճանապարհը, և յետոյ

շեղեցաւ մայր ճանապարհէն, վասն զի հասուած էր այն աղբիւրին՝ ուսակից զով ջուր կրբիւր՝ և միակ աղբիւրն էր այդ լեռնային ճանապարհին վրայ. և կակութ հացին պէտք էր այդ զով ջուրը։ Թորոս, փոքրիկը կակուդ խսանիքին վրայ նստեցնելէ վերջ, մօտեցաւ աղբիւրին. Քիչ մը անդին։

— Հիւսէյն, սրսը մեր զիմաց կու զայ, փոխաց Ահմէտ, և աարձանակը ծերունիին մազսա կարծըն ուղղեց։

Հարուածը զդրախաբար վրիպած չէր. յաղմանպամ թորոսը ունդին զէպ ի վեր ցնուուցաւ, բազուկները պաղատանքի ձեւով զէպ ի երկինքը կարկառեց. բազկի բուռն ջզագութեան պահուն՝ կողովը օգոյ մէջ նստաւած սկսաւ րլուրէն վար գլուխի. վիրաւորւածքը օգոյ մէջ երերաց քանի մը բոպէ, և յետոյ գետին փուուցաւ ժայտին զարնուելով. երկու կարմիր աղբիւրներ յորշանս կը բղիւն ժայռէն և իր կուրծքն։

Այդ աղբիւրին հանգիպակաց բլուրի մը կողքին բնկագմանած էր Պ... գիւղացի այգեան մը՝ Նիկոյ անունով. որ ասրձանակի ձայնը լուելով՝ վաղեց զէպ ի այն կէտը՝ որ կանաչներէն բարձրացող նստք ծուխ մը, լալիկն հառաջներ և մանկան մը ճիշը՝ եւ զենի մը իրագործամը կը մատնէն. կիւրմիները թորոսը կողազաւած փախած էին՝ երբ Նիկոյ արդէն հրացանը պարպած էր իրենց գիմաց։

Այգեպանը, շանթահարուած՝ ահսաւ ծերունի մը որ կը ստավակէր իր արեան մէջ՝ հոգելարքի ամենէն ահաւոր սագնապներով։ Թորոս ձեռքերը երկնցոց՝ օգոնութիւն ու գերով իրեն զիմով անձէն, բայց եղր ան մօտեցած էր՝ գետին ընկան թայլ բազուկները. վերջին ճիգ մ'ըրբաւ ան և խոշոր աշքերը բանալով՝ բուռ. « Հան... խաշիկը... քեզ... կը յանձ... » և աշենքը զոցեց. բուռն ցնցումներէ վերջ՝ յանկարծ անշարժ մասց։

Թորոսը մեռած էր։

— Ով է այս խաշիկը, ըսաւ ինքն իրեն նիկոյն. Երբ թուփերուն մէջ լացող մանուկ մը նշմարեց՝ աճապարեց զայն զրկելու, մեռնող ծերունիին պատուէրը կրինելով. յե-

առյ թաղեց սպանեալը իր և փոքրիկն ան-  
դիսակից արցունցներով։

Նիկոն վճռեց իր տանր տանիլ Խաչիկը,  
մեծնել զայն իրբեւ իր որդին, ուսում, ար-  
հետ սովորեցնել և երջանիկ ընել զանիկա։

\* \* \*

Այդ ժամանակ 27 տարեկան երիտասարդ  
մէկը Նիկոն, գեռ նոր կարուուծ : Սեպտեմ-  
բեր ամսոյն մէջ որդիկիր ըրաւ Խաչիկը. այս  
այն ամիսն է երբ խաղողները կարմիր-կար-  
միր կը փայլիկն այդիներուն մէջ կամ սամի  
նման կը գիտին և իրենց կը քաշեն աղաք-  
ները : Պ... գիւղի այդիներուն մի մասին  
պահապան գրուած էր Նիկոն. և յիրավի այդ  
գործին որբան յարմար էր: Սեւ աչքեր կար-  
միր երեսներուն վրայ և ածուիկ պէս սեւ  
յօնքերու տակ. շէկ պեսիկը, որոնք մինչեւ  
ականչները կը հասնէին, վրան գօյզիկի  
տարազ մը . վերջապէս՝ այնպիսի կերպա-  
րանք մը . քալուածք մը և նայուածք մ'ու-  
նէր՝ որուն շուքն իսկ կը վախնային աղաքը։

Նիկոյ՝ ատրիներէ վերջ, երբ ալ սեւ յօն-  
քերու մէջ սկսան սպիտակ մազեր երեւալ,  
որիշ գործ մը ձեռք առաւ. նա մանր մունդ  
ուսելիքներ և գործածելի իրեղներ գնելով՝  
կը աանէր զանոնք վաճառելու երկու ժամ  
հետո զնուուը կիրմիներու գլուղը և այն-  
քան կը շահնէր՝ որ իր ընտանիքը կրնար բա-  
րեկեցիներուն թուոյն մէջ համարել տալ,

1896 թօւականին Նիկոյ արգէն չորս  
աղայոց հայր եղած էր. անդրանիկը զեռ  
«հայրիկ» շլուած վախճանած էր. կը մային  
երկու պատանիներ՝ կարապես և Փօղոսիկ և  
փոքրիկ աղջիկ մը՝ Նուար :

Խաչիկը՝ որ հիմայ զրեթէ քան տարե-  
կան երիտասարդ մ'եղած էր, գլուցական  
շրջանը լնջնելիքն ետք՝ արհեստ մը ձեռք  
առաւ, և իր մեծ յաջողակութեամբ Նիկոյին  
ընտանիքին թիկաւնք մ'եղաւ : Կարապետ  
ու Փօղոսիկ միշա եղբայր կը ճանչնային  
զինքը :

1896ի Աստուածածնայ տօնէն մի քանի  
օր առաջ՝ Նիկոյ կիրմիներուն գիւղը մեկ-  
նած էր՝ իր սովորական տուեարական գոր-  
ծերով, և պէտք էր տօնին նախորդ օրը զայ-

նալ : Այդ օրը հասաւ. զեռ արեւը մարը  
շմասած՝ կարապետն ու Փօղոսիկ իրենց հի-  
ւանկ մայրիկն կը բամուուէին հօրերնուն ընդ-  
առաջ ենելու համար և նուարը պատուհա-  
նէն կը կրնէր իր եղբայրներուն որ հայ-  
րիկն իրեն խոսացած ընծաները ձեռքին  
շանունւն. նա նոյն բաները կրնէնց, երենց  
մինչեւ որ ալ չսենուեցան անսնք :

Այդ օրը սակայն ողբի ու արցունքի օր  
մ'էր Մ... գիւղացոց համար, նոյն առա-  
ւու երեք հարիւր զինուած կիրմիներ՝ եկած  
էին Խաչիկն հայրենիքը ջարգելու ու աւերե-  
լու. նոյն օրը Մ... գիւղի զրեթէ բոլոր էրիկի  
մարդիկ և երիտասարդները սպաննուեցան և  
շատարը քնոյ մէջ . . .

Պատճառը պարզ էր. բանի մ'օր առաջ  
կիրմիներուն զիւղապետը հայ լազերուն եղ-  
ները կ'ուզէր տանուլ. իրեն թէ իր ապրանքն  
ըլլար: Այդպասի յափասակութիւններ սովո-  
րական երած էին. սակայն այս անգամ այս  
կ'ըլլայ անսովորը՝ որ լազերէն մէկը կը  
յանգինի զնողակով մը վիթխարի մարզը գե-  
տին ձգել: Այդ գիւղապետին վրէժը կը լու-  
ծուի երբ Մ... գիւղը կը ջարգուի:

Զարդը երբ վերջացաւ՝ խիսա պատուէր  
մը տրուեցաւ իգական սեխին՝ « տուներէն  
չենելչուաննուելու համար »: Այդ պատուէրը  
այնքան հաւասարմութեամբ պահեց երկշու-  
սեռ՝ որ ոչ մէկը չէր յանգիներ պատուհա-  
նէն սոկ զլուիր գուրս հանել :

Նոյն օրը Մ... գիւղին շուրջը անցուցին  
կիրմիները, և իրիկուան գիմ իրենց տուները  
մինչեցան :

Շատ քիչ հեռացած էին Մ... գիւղին՝ երբ  
ձիու մի արտիկինը անշարժ կեցուց մի քանի  
կիրմիները.

— Աէի, ըստ մէկը, հսու մօտէն կու  
գայ ձիու մը բալուածքին ձայնու:

— Ապասենք. եթէ կառկածաւոր անձ մ'է՝  
ահա հրացանս. ըստ և պատրաստեց զայն:

Քիչ վերջ, թուփերու ետեւէն սպիտակ ձի  
մ'երեւցաւ, և քաջ ու զինուած մարդ մը  
անոր վրայ, որ իր խորխտ նայուածքով կար-  
ծեն բնութեան կիրմերը ու սոսկալի պեսա-  
րանները կ'ուզէր վախցնել.

— Նիկոն է. փսփսաց մէկը :

— ԽԵՇԴԱ ՆԻԿՈՅ, ահ, ինչ բարի մարդ է :  
— Ե՛ս ալ շատ բարից գտած եմ իրմէ .  
մեղք որ այս բոպէխ մեկի կը հանդիպի :  
— Այսպիսի վայրկեաններուն մարդու  
մը բարութիւնը չի փնտուիր :

— Իրաւունց ունիս . կը բաւէ որ Պ...  
զիւղի բնակիչ մ'է . ապահով Մ... զիւղի  
քունքն անցած է և մեր բրած ջարու իմա-  
ցած :

— Ապահով հիմայ Պ... զիւղը լուր պի-  
տի տանի :

Այս խօսակցութիւններով կը փսխոյին՝  
երբ նիկոն բաւական մօսեցաւ և իր զիմաց  
գտաւ զինուած կիւրճիներու խումբ մը . Ա-  
րիւն քրանիցաւ . զիմացը ութը զինուած  
թշնամի կար , մինչդեռ իր բէկորիկը վեց  
գնաակ ունէք :

— Կրակ , ըստ կիւրճիներէն մէկը :

Բայց առաջին անգամ ինքը գեաին ին-  
կաւ : Սակայն մի և նոյն վայրկենին հրա-  
ցաններու շաշինք լուց ու արձագանքը համ-  
րեց' թէ քանի զնապակ ուզգուած էր...

Նիկոն գեաին ընկաւ :

Մէկը մօտեցաւ անոր .

— Մեռած է , հարցուց ուրիշ մը :

— Զէ զիւ . աշշերը բաց են , ինձի կը  
նայի . օգնութիւն կ'ուզէ :

— Մեղք է... բարի մարդ մը կը սպան-  
նենք , ըստ ուրիշ մը . Այդ վայրկենին՝ կա-  
զալով մէկը կը մօտենար նիկոյին : Դա՝  
նիկոյն վիրաւուած կիւրճն էր :

Նիկոյ աշշերն անոր դարձուց ցաւակցու-  
թեան նայուած ըստ :

— Օգնութիւն կ'ուզէս . ահա քեզի հա-  
րուած մը , հանդիսա քնացիր . ըստ , և քանի  
մը հարուածներով նիկոյին զլուխը կարեց  
և թուփի մը մէջ նեսեց : Նիկոյին մարմինը  
կառը կառը ըրին ճամբուն վրայ և շատպա-  
ցին իրենց ընկերներուն հաննելու :

— Զին պիտի թողննաց :

— Ինչ պիտի ընենք . կինայ զմեզ մատ-  
նել , ձգնեն , ըստ ուրիշ մը , և անհետացան :

Քասորդ մը վիրջ ուրիշ ձիւար մը կ'ան-  
ցնէր այդ ճանապարհին վրայէն . մեղմ երգ  
մը մըմմջելով և զմայլած պայծառ երկնցին  
և հրդեհուող արեւաւացին վրայ : Զին կանգ

առաւ տեղ մը . ձիւաւորը առանց առջեւը  
նայելու կը մտրակէր զայն , բայց ան նորէն  
քայլ մ'իսկ չառաւ , և այս անգամ կատա-  
ցած , առջեւի ուաքերը վիր բարձրացուց և  
խրինջեց :

Ձիւաւորը սթափելով՝ ճանապարհին վրայ  
նայեցաւ ու սոսկումնալ տեսաւ իր առջեւ ա-  
րիւթաթմախ կտոր կտոր եղած մարդ մը .  
զլուխը չկար որ զայն ճանչնար : Այդ միջու-  
ցին ձի մը կը իրինջէր մօսի զաշախն մէջ .  
ճանչցաւ սպիտակ ձին , և ապահով՝ սպան-  
նուուը իր հայրենակիցը , իր նիկոյ բարե-  
կամը պիտի ըլլար : Այսրեկած նա հազիւ  
կրցաւ նիկոյին ձին առնուլ և Պ... զիւղը  
դիմել առանց հետեւ նայելու :

Պ... զիւղին մօտեցած էր անցորդը Յով-  
հաննէս : Ճամբուն եզերքը թուփի մը տակ՝  
երկու գէմքեր նշամարեց . չճանչցաւ զանոնք ,  
բայց գուշակեց թէ նիկոյին որդիկը պէտք  
էին ըլլալ :

— Պօղոսիկ , կ'ըսէր կարապետ , ձիու  
մը ոտնածայնը կը լսե՞ս :

— Այս . քի մը հեռուն ճերմակ ձի մը  
կը նշամարեմ . մեր հայրիկը՝ պիտի ըլլայ :  
Սպասեցին պատանիները . անցորդը , որուն  
ականջին հառան այս խօսքերը՝ չկրցաւ ար-  
ցունքը բռնել . և ո՛կ է կասկած մը շտարու  
համար՝ մարակեց ձին , անցաւ անոնց առ-  
ջեւնս սա խօսքերը լսելով :

— Զէ եղայրյ , հայրիկը չէ . . .

Գէշերը յառաջեց . բոլոր անցորդները և  
աշխատաւորները իրենց տուները մեկնեցան .  
և գետ կարապետ ու Պօղոսիկ այդ մի և նոյն  
թուփին տակ նստած՝ իրենց հօրը կը սպա-  
սեն : Լութիւնը արիած է չորս կայմ . միայն  
երբեմն հետուէն շնագայլերու ձայները անոր  
խորհրդաւորութիւնը կ'արատաւորեն իրենց  
ահարկու ունակներով . անոնց կը միանայ  
խոր և միակերպ ձայնը՝ որ իրենց զիւղէն  
կ'իշնէ և զարհուելով զիմացի լենիներուն՝  
իրենց կը վերաբառնայ մեղմացած . այդ  
ձայնի հայտնին մէջ շփոթուած է լացը , ողբը ,  
խսուուը :

Կարապետ և Պօղոսիկ , այդ խորհրդաւոր  
տեսարանին առջեւ համրացած՝ հեռուն կ'ուղ-  
ղեն ականջին . հեռուն որբան որ կրնան ,

Ճիռ մը արոփիւնը լսելու համար . բայց հեռուն ուրիշ բան չի լուսէիր՝ բայց իթէ ուրիշ ողբեր՝ զորս լարկան առու մը կը հնչեցնէ :

— Հայրիկը արդեօց հիմայ անցաւ այդ ձորէն . կ'ըսէք կարապեա յոյժ աղօտ ու բախութեան մէջ :

Կ'անցնէր քառորդ մը , էսո ժամ մը . հայրիկը պէտք էր հասած ըլլալ , պէտք էին իրենց ձիռ արոփիւնը լսել . սակայն պազ ու անզայ լուսթիւնը՝ կը գողնար իրենց դէմքի խարէական ժպիտը և սրտի բերկրանքը :

Քանիք մը վայրիւնան վերջ՝ ձիռ մը արոփիւնը կը հասնէք :

— Այս անգամ ապահով հայրիկն է որ կու գայ , ըստ կարապետ :

Երբեքն ալ շանչերնին բռնեցին՝ որ շըլլայ թէ խարուած ըլլան . ձայնը կը սասականար մօսենալով . սպասող պատանինքուն բրիրանքը կ'աւելնար , որնք աշքերնին յառած էին ճանապարհն երեւցած վերջին կէտը : Հոն վերջապէս ձի մը երեւցաւ . բայց ան սեւ էրո . սրտերնին սեւցաւ :

— Եղբայր , նորէն հայրիկը շէ , ըստ Պօղոսիկ՝ լեցուած աշքերով . և լուսնակի լուսոյն տակ փայլլիցան արցունքի կաթիւներ , որոնք կ'ինային կարապետին և Պօղոսիկին աշքերէն , բայց իրենց սրտերէն քամուած :

— Պօղոսիկ , ըստ կարապետ զողղացող ձայնով . ժամանակն անցաւ . շշնկոց մ'ալ չի լուսէիր , տուն դանանք , թերեւս վաղը պիտի գայ . և ուսքի ելան աւ ձեռք ձեռքի տուած առն գիմեցին :

Այն վառլուն ու ժպառն զէմքերլ , որ քանիք մը ժամ առաջ կարծես արեւմուտքին հետ կը մրցէին՝ հիմայ անսնը ախուր են և արցունքներով թրջուած : Տիսուր էին անսնը , վասն զի իրենց ականջին հասած էր նոյն օրերուն եղած ժողովրդեան խօսակցութիւնը — ջարպի մասին — որ նոյն իսկ իրենց մանկական մաքին տիսուր զուշակութիւններ կը ներշնչէր :

Երկար երեւցած ճանապարհը կարեցին : Հասան , վերջապէս հասան ... Հեռուէն երեւցաւ իրենց տունը . պատուհանէն կ'երեւէր

կանթեղը . անոր լցուը սովորականէն աւելի մեծ էր . կարծես ան ալ նիկոյին կը սպասէք . . .

Պատուհանին դիմաց նստած տեսան իրենց քոյրը , որ աշքերը փողոցին՝ իր հայրիկին գալուստին կը սպասէք , հիւանդ մօրը աւետիս մը տալու համար :

Ո՛հ , ինչ տաժանելի վայրիկեան մ'էր որ ալէկոնեալ ճանապարհի մը յաջորդեց : Երկու եղբայրները « Դուն գուոր զարկ , զուն զուոր զարկ » կը թափանձէին իրարու :

Կարապետը զրան կը մօտենար զարնելու համար որ բանան . բայց անոր թակը կարծես հրաշէկ երկաթ մ'էր , կարծես պատանին իր ձեռքին այրուիլը կը զգար . և սոսկումով մը ետ կը քաշաւէր : — Ի՞նչպէս զարնել . ի՞նչպէս իրենց հիմանդ մօր երենալ առանց հայրիկին : Զօրրորդ անգամուն ալ սիրա ըրաւ և հազիւ թէ զարկաւ՝ իրենց քոյրիկին ձայնը լսուեցաւ . որ կ'ըսէք .

— Մայրիկ , ահա հայրիկը . վազը տօն է , պիտի առողջանամ այնպէս չէ մայրիկ :

— Կ'առողջանամ , նուարդ . գնաւ շուտով զուոր բաց՝ որ հայրիկը շըլլապօտէ , ըստ հիւանդը : Եւ աղջիկը վար իջաւ զուոր բանալու :

Սկային հոն չկար հայրիկը , չկար իրենց ձին . Նուարդին զիմաց ելան երկու պատանիներ ցուրտ նայուածքով , « որոնք , այն , իրեն եղբայրներն էին . բայց քանի որ անոնց հետ չկար հայրիկը՝ այդ վայրիկին անոնք մարդկապանէ մը աւելի ասելի էին իրեն համար . . .

Նոյն գիշերը նիկոյին տանը մէջ գաղտնի ողբ մը կար . հիւանդ մայրը անկողնոյ մէջ կը հեկեկար . և իր թափած արցունքները չէր ուզեր սրգիքներուն ցուցնել :

\*

Երկրորդ օրը կիրակի , իրիկուան գէմ , քանիք շափ երիստասարդներ , ամէնքն ալ զինուած կը մեկնէին Պ . . . զիւլէն : Ալոնց մէջ էր Խաչելին ալ , նիկոյին հոգեզաւակը : Բաւական հեռացած էին Պ . . . զիւլէն՝ երբ երիստասարդներէն մէկը՝ Միհրան , Խաչելին երկու պատանիներ ցըցուց , որոնք գլուռ

զիմի տուած՝ մտածկոս կեցած էին լուսրն-  
կային նուռող և ճշող լուսոյն տակ:

— Խոչչիկ, տեսն, եղայլներդ են. ինքն  
աղաքներ, ի իրենց հօրը կր սպասոն գեն.  
մինչդեռ մենք անոր մարմինը բերելու կ'եր-  
թանք:

Այդ փոքրիկ խումբը գրիմիշ մէկ ժամուան  
մէջ կտրեց երկու ժամուան ճանապարհը.  
ալ յոփնած էին. և լուսինը արդէն անհե-  
տացաւ երբ Մ... գիւղին քովիրը հասան.  
ու սե խաւարը եկաւ ծածկելու ամէն ինչ,  
նաև Նիկային մարմինը:

— Անկարիկի պիտի լլայ այս մթու-  
թեան մէջ զանել Նիկոյին մարմինը, ըստ  
երկուան մեզի ժանօթ Յովհաննէսը, հոս  
մօտերնիս է Մ... գիւղը. կարելի չէ արգեօք  
զիշերը հոն անցնել, և առաւոտ՝ արշալուսոյն  
տակ փնտուել անոր մարմինը:

— Լաւ բար, բայց զեղացիները կը խոռ-  
վենք. արդէն լածիս հաւեմատ վարի մէջ  
են անսնը, որէ օր կը սպասեն որ Կիւրճի-  
ները վրէծ պիտի լուծեն:

— Ի՞նչ վրէծ հարցուց աւրիշ մը:

— Զէի՞ր լուծ . քանի մը հայ լաշեր՝  
կիւրճի գիւղապետը սպաննած են:

— Անապարենք, ըստ Յովհաննէս՝ կարե-  
լով անոնց խօսակցութինը, քանի որ զին  
անոնք չեն քնացած՝ երթանք այդ հերասէր  
ժողովորդին հիւր լլալու:

Ամէնքը հաւանեցան, և հինգ առաը վայր-  
կենէն Մ... գիւղը մտան:

Քանի երխասարգներն ալ գիւղին մէջ  
մէկ մէկ առն ցրուեցան : Ամէնքն ալ մէկ  
զիշերուան մէջ զարաւոր պատմութիւններ  
ունեցան. ամէնքն ալ տէսուր, կարծես զե-  
րեղմաններու մէջ իրազործուած :

Երխասարգներէն մին՝ Միհրանը, դրան  
մը զարկաւ որ բանան. լուսթինն էր. ոչ  
մէկ պատասխան շրնկունեցաւ և ներսն ալ  
կայծ մ' իսկ լոյս չկար : Իր մօս տան մը  
երդիքին վրայ նուռաց լոյս մը նշամարեց, և  
ոկսաւ նոյն առնը զրան զարնել : Հան ալ  
ոչ մէկ պատասխան շրնկունեցաւ . ախուր  
լուսթին մը իր միաբը առնչեց : Կրկին զար-  
կաւ դրան և աւելի ուժով : Այս անզամ զրան  
մեղքին նշամարեց աղջիկ մը՝ տաններկու-

տաննրորս ապրեկան, որ իւղէ ճրագ մը ձեռ-  
քը՝ գողգոչուն բայլերով զուոր բանալու : Կո-  
գար : Աղջիկը մօտեցած էր զրան, բայց զայն  
բանալու զանգաղեցաւ, մինչեւ որ Միհրան  
երրորդ անզամ մ'ալ զարկաւ աւելի՛ ուժով :  
Այն ատեն աղջիկը խաչակներեց, կարծես  
մահուան զիմաց կամ կախաղանի մը առջիւ-  
րյար, ու կամոցուկ մը զուոր բացաւ : Իր  
զիմաց զինուած երիտասարդ մը տեսնելով  
երկուան ճարգող կիւրճիններէն մէկը կար-  
ծեց . « Ահ, կիւրճի մ'է » բաւ և զուոր  
այնպէս ուժով փակեց՝ որ մթոյ մէջ մնաց.  
Ճեռիկ ճրազը մարեցաւ :

Փոքրիկը ահաբեկած ներս վազեց : Ան-  
ձանօթին սա խօսրերը զինքը կեցուցին.

— Մի վախնար աղջիկ, եղբայր եմ.  
դուոր քաց :

— Իմ եղբայրս հոս սպաննուած է . և  
ուրիշ մ'ալ զոր չեմ ճանչնար կորսուած ,  
ըստ աղջիկը . բայց այս անզամ իր շեշ-  
տերուն մէջ երկիւղ չկար . նա առահօվ էր  
որ նորեկ հիւրը հայ էր :

Հ. Մ. Պոտուբան  
Վերջը յաջորդում

## ՀԱՅ ՀԱՆԴԵՍՆԵՐ

ՀԱՆԴԵՍ ԱՄՅՈՒՆԱՑ, (1906, թիւ 1):

Հ. Յ. Տ. Յայտաթեան գրոց հին թարգ-  
մաննութեան նոր հրատարակութեան վրայ  
աեղեկութիւններ կու տայ: Աւելի հետաքրր-  
բրական պիտի ըլլայ յաջորդ յօպւածը՝ զոր  
գրել կը խօսանայ, յարում բնութեան պի-  
տի առնախ Լամբրանեցոյն և հին թարգ-  
մաննութիւններ : Յօպւածին շարժապիթ եղած  
է կոնիրիփի մէկ նամակի՝ ուսկից կարեւոր  
կտերը թարգմանելով մէջ կը բերէ : Անզիա-  
ցի հայագէտի թուղթին շատ հետաքրրա-  
կան կտորն այն է որ նա յօպւած մը դրած  
է յօրացրի Աստուածաւուական Թրամանց  
(Journal of theological studies) նիմթ  
ունենալով Յովհանն պատեսուի « Յաղակս պատե-